ԺԴ. գրեաց առ նոսա։ Որք յանձն առեալ էին կատարել զհրամայեալն ամենայն ըստ գրեցելոյն։

Վասնորոյ զթուղթ դարձեալ ըստ առաջնոյն որպիսութեան. և պնդագոյն զնոյնս պատուիրելով գրեաց առ նոսա, որ էր և ի վերայ Զրուանու և Դարբանտու, Մուսկիւրու և Բաքուայ և ամենայն շրջակայ տեղեացն, զորս և ի բերան պատուիրեաց Տէր Զաքարիային, զի ծանուցէ նոցա։ Որպէս զի՝ մի ընկալցին զմի որ յերկուց ինքնընծայիցն, և մի զժողովարարս նոցին ընկալցին, և զարդիւնս ինչ տայցեն նոցա, և թէ յայլուստ ժողովեալ առ ինքեամբք անցուցանել կամիցին, արգելցին, և առեալ ի նոցանէ զարդիւնսն, առ ինքեանս պահեսցեն, մինչեւ միապետեսցի երկրդութիւնն, և հաստատեսցի Աթոռն։ Նոյնպէս և եթէ ժողովարանն առ ինքեամբք անցուցանելոց իցէ երթալ յայլուրեք, արգելցեն և մի թողուցուն և բազում առ այս պատուէրք։

Իսկ ի հաշտարխան այսր իրակութեան աղագաւ։ Թուղթ գրեաց Սրբազան Վեհն առ հասարակ ժողովուրդս, ծանուցանելով զերկրդեցելոցն զորպիսութիւն և զկամս իւր, թէ զինչ իցէ առնելոց։ Եւ պատուէր նոցին զի մի եւս զժողովարարս նոցին ընդունիցին և մի զարդիւնս ինչ տայցեն նոցա, և զգուտեալսն յետս առցեն ի լիրբ ժողովարարէն, որ նարդեանս էր անդ Խաչատուր անուամբ (զորմէ և ի Նոյեմբերի Ե. ի վեր այդր ահա ասացաք)։ Եւ պահեսցեն զայնս առ ինքեանս մինչեւ միապետեսցի երկրութիւնն և Դանձասար հաստատեսցի, և յայնժամ որպէս գրեսցէ, այնպէս առնիցեն։ Ցուցանելով նոցա, թէ մինչ ըստ գրեցելոյս ոչ առնիցէք, յիրաւի, զվէրս ի վերայ վիրաց կուտէք ինձ, և այնուհետեւ ի բարկութիւն զիս գրգռէք։ Ցուցանելով և զլրբութիւնսն նորին լիրբ ժողովարարի, զոր անդէն ընդդէմ սրբոյ Աթոռոյս առնէր։

Թուղթ եւս առ առաջնորդ Ստեփաննոս վարդապետն ըստ նմին դարձեալ և նոյնն, բայց և մեղադրութիւն վասն ժողովարարս Դանձասարցոցն ըստ նոցին ախորժակաց նուիրակ անուանելոյն, և զանուն Իսրայէլին ի պատարագոջն յիշելոյն, և յերկար ժամանակս զպատասխանիս թղթոցն իւրոց ոչ գրելով։